

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկան վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	3 սլ.
սարեկան վեցամսեայ	1.50 "

Եանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Կրեմլին աւելի անգամներու համար 20 0/0 զեղջ կրկայ:

Վառահայի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ ВАНАРЯЪ

համակ և զրամ զոկն յարագրութեանս հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ," Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և թղթի օրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵՆԴԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՆԿ ՎՃԱՐԷ

Café Promenade Vienne

Այս շքեղ սրճարանը կը գտնուի Վիեննայի Թրանց Ժօսեֆ քարափին վրայ: Կըստանայ զանազան հայերէն թերթեր: Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելիցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրուածքները և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Եւրոպայի երկու միապետութիւններն ալ, Ռուսիան ու Թուրքիան, այս միջոցիս յակնուկրայ եղած են: Ռուսաստանը վերջնականապէս որոշած՝ ցարիզմը ասպարէզու և ազատական ընթացք մը անոր տեղ հաստատելու: Գերագոյն ճիգեր կը թափէ, ժողովրդային հոկայ ու հզօր բողոքներով իր կամքը կարճապայտէ, արիւնտ կուր կը մղէ ի հարկին բանակալներուն դէմ՝ ազատութեան ճամբան բանալու համար: Փորթամուտի հաշտութեան կընքուելէն ի վեր, շնորհիւ այս բազմապատիկ ջանքերուն, ազատական Ռուսիան սկզբունքով յաղթանակը տարաւ արդէն: Իր պահանջած խղճի, խօսքի, մամուլի և այլ ազատութիւնները իրեն «շնորհուեցան» նոյնիսկ բանակալ-ցարիզմէն, որ համոզուելով թէ ընդգրկուած իրենց վրայ իր պահանջած խղճի, խօսքի, մամուլի և այլ ազատութիւնները իրեն «շնորհուեցան» նոյնիսկ բանակալ-ցարիզմէն, որ համոզուելով թէ ընդգրկուած իրենց վրայ տիրապետող վայրագ ուժին անպիտանութեան համոզուած՝ կըձգտուին զայն բոլորովին կործանել և անոր աւերակներէն ազատ փոքրիկ և անկախ պետութիւններ ստեղծել:

Եւրոպայի երկու միապետութիւնները օրհասի ճիգերով յառաջգիւղարկուած նոր ուղին խափանել փորձեցին, երբ սկսան «Ռուսական հայրենիքի» անունով յարձակիլ վայրագօրէն ազատական ժողովրդին, ուսանողներուն ու բանուորներուն վրայ: Կհարկուեցաւ իր ուժերը համախմբել: Վերջին լուրերը կիմացնեն թէ ռուսական յեղափոխութիւնը կրկին բուռն կերպով արժարժած է, մանաւանդ կողմասի և Լեհաստանի մէջ: Ռուսիան փրկութեան սեմին վրայ է: Արշալոյսի նշոյնները արդէն բաւական յստակօրէն կուրուպեն նոր կեանքի պատկեր ռուսական հորիզոնին վրայ:

Մէկ գարէ աւելի է ուր Թուրքիան ալ անվերջ պայքարի թատերաձայր մը կը հանդիսանայ: Ժողովուրդներու ապստամբութիւնը անպակաս է այդ անիծեալ պետութեան մէջ, որուն հաստատուած օրէն իսկ երբէք մարդկային կեանքը հանգիստ ու ապահովութիւն չէգտած հոն: Թուրքիոյ շարժումները տարբեր ձգտում ունին: Մինչդեռ ռուսականը կը ձգտի ցարիզմէն ազատուելով նորակազմ, հզօր միացեալ ու ազատ երիտասարդ Ռուսիա մը ստեղծել: Թուրքիոյ ժողովուրդները իրենց վրայ տիրապետող վայրագ ուժին անպիտանութեան համոզուած՝ կըձգտուին զայն բոլորովին կործանել և անոր աւերակներէն ազատ փոքրիկ և անկախ պետութիւններ ստեղծել:

Այս, ինչ որ ալ ըսեն շատերը, Թուրքիոյ մէջ կռուող քրիստոնեայ ազգութիւնները, Հայը, Մակեդոնացին, ինչպէս ժամանակին Պուլկարը, Սերպը, Յոյնը եւն, Թուրք կառավարական ուժերը բարեօրէն համար չէ որ կը կընուին կամ կռուած են: Ասիկա ճշմարտութիւն մըն է, մեր սրտին ամենէն խորունկ ալքերուն մէջ քանդակուած, զոր ի հարկին գիւնադիտօրէն չկը ծած:

Կենք միայն: Թուրք կառավարութիւնը անբուժելի փտախտի ենթարկուած է և զայն բարեօրէն անկարելի է բացարձակապէս: Ամենուս ալ ծանօթ է որ, Անգլիա մէկ դարամբողջ աշխատեցաւ Թուրք կառավարութիւնը բարեօրէն, որպէսզի ներքին ապստամբութիւնները վերջ գտնեն, կեանքի, ինչքի ապահովութիւն ըլլայ, և հարկ չի մնայ օր մը կրկին եւրոպական միջամտութեան: Բայց իր բոլոր ջանքերը, իր ամբողջ հովանաւորութիւնը որ շնորհեց Թուրքիոյ այդ համոզումին վրայ հիմնուած՝ ի թերեւ ելան: Ու նոյն ինքն Անգլիան, վերջապէս, տեսնելով որ անկարելի է Թուրքիոյ փտտած կառավարութիւնը վերանորոգել, թողուց ատ ծրագիրը, և փոքրիկ ազգութիւններու անջատման ուժ տալով՝ հետզհետէ Թուրքիան մէջտեղէն վերցնելու ծրագիրը ընդգրկեց: Այս, Թուրքիան քաղաքական փտախտէ վարակուած պետութիւն մըն է: Զայն բարեկարգելով փրկելու ջանալը անկարելիութիւն է, ինչպէս անկարելիութիւն է Ֆիլիպիական փտախտը բուժել: Հիւանդութիւնը քիչ քիչ կը յառաջանայ, իր հակադրեցութիւնը ամբողջ կալմուածքին վրայ կը զգացուի, որ, օրէ օր շնչուելով կը փտտեցնէ ախտաւորին ներքին գործարանները, կը թունաւորէ արիւնը ու վերջ ի վերջոյ կը զգետնէ զայն: Վախճանը յամր կը ըլլայ բայց անխուսափելի:

Այսպէս ալ է Թուրքիան: Եւրոպայ անխուսափելի վախճան մը միայն կրնայ այդ երկրին մէջ ապրող ժողովուրդներուն հանգիստը ապահովել, բոլոր քօմբօմիւնները, բոլոր շարխափան միջոցները ապարդիւն կը մնան ինչպէս մնացած են ցարգ: Որովհետեւ Թուրք պետութիւնը ինքնին, ինչպէս նաեւ Թուրք ժողովուրդը, ընդունակ չէ օգտուել իրեն հրամցուած գեղատեսիլներէն: Պետութիւնը պէտք է

վերջնապէս քանդուի օր մը, իսկ հոն ապրող ազգութիւնները, ըստ ժամանակին քաղաքականութեան, կամ ինքնավար պետութիւններ հիմնեն և կամ արդէն գոյութիւն ունեցողի մը խառնուին: Այն տեան Թուրք ժողովուրդն ալ, շատ ետ մնացած ըլլալով նոր հոսանքին հետ ընթանալու համար, կամ կը գաղթէ և կամ քիչ քիչ կը ձուլուի տիրող ազգութեան մէջ:

ՇԱՐՋՈՒՄ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐՔԻՆ

ՀԵՂԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ

ԸՆԴՆ՝ ԴԱՏԱՐԱԶԻՆ ՃՍՈՒՇ

(«Մանզու մէի-էֆէրարան» քաղաքում)

(Շար. նախ. քիւն)

Յուլիոս Թուրք օրուան եղևնական արարքին հեղինակներուն գաղափարութիւնը՝ Պօլսոյ եղևնագառ տեանին քաղաքում էր 1848 և 19 թիւերուն մէջ: Այսօր կը շարունակուէ ընդհ. գաղափարը նէմէտտին պէյի ընդարձակ բանախօսութիւնը, արարքին մանրամասնութեանց և հեղինակներուն նկատմամբ:

Փախստական ամբաստանեալներէն Սիլվիո Րիչի, Գարլ Սուվանովիչ եւ Թրասա Սուվանովիչ որոնք Պօլսոյ յեղափոխական մասնաճիւղին խիստ կարեւոր անդամներէն էին, քօմբէթին հետապնդած անիծեալ գաղափարին համար եղևնական հարեւոր և զանազան գործողութիւնները, իրենց աւագակային կոչումին ճշմարտապէս պատշաճ չար եղանակով մը ոկատ են հետապնդել և պատրաստել, Այսպէս, ասոնք, Մէլիւրի ըստուած կը բանիւթը Թրասայէ հայթայթելով, ծրարներու մէջ Պիլիպոսի Պուլկարիա Պուլկարիայէն վառնա, և վառնալէն ալ պուլկարական շողանաւորով ու անոնց նաւապետներուն ու նաւաստիներուն միջոցաւ Պօլսոյ մտցուցած են: Այս հրանիւթերը շողանաւէն հանելու եւ փոխադրելու գործողութիւնները յանձն առած է Սիլվիո Րիչի անուն չարագործը, անցած

փէ իր մէջ անգլիական ժողովուրդին ամենէն ամուր նկարագիրները, ու իր ամբողջութեան մէջ կը ներկայացնէ ամենէն խաղաղասէր նախարարութիւնը, որուն երեսը շատոնց ի վեր տեսք չունէր Վէսթմինսթըրը:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Աթէնքէն կը գրեն թէ Յունաստանի մէջ ձերբակալուած հայ յեղափոխականները չգեկեմբեր 4/17 ին պիտի սկսին դատուիլ Լամիայի եղեռնադատ ատենին առջեւ:

— Սուլթանը 100 օսմ. ոսկի նուէր տուած է Գալփական Որբանոցին սոյն հաստատութեան սանուհիներուն կողմանէ պատրաստուած քառակուսի սէճեհատէիմը փոխան որթանկագին անդուսիմայ ոսկեթել, պոստէ եւ նուրբ ասեղնագործութիւնով բանուած է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սոփիայէն կը հեռագրեն թէ 1906 տարուոյն ելեմտացոյցը ընդ Ոսպրանիէին ներկայացուեցաւ 117,500,000 ֆրանքի գումար մը կը ներկայացնէ, այսինքն 6 միլիոն ֆրանք աւելի՝ 1905ի ելեմտացոյցէն: Այսու հանգերձ շատ քիչ բան աւելցուած է պատերազմական ելեմտացոյցին վրայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պօլիս 5 դեկտ.— Միջազգային նաւատորմիդը ետ պիտի կանչուի երեքշաբթի օր:

Սուլթանը տէրութեանց առաջարկութիւնը, աճապարած էլընդունիլ, որովհետեւ Լոնտոնի թրքական դեսպանը Բ. Գրան ազգաբարձ է՝ թէ Գրանը յամառի տէրութեանց առաջարկը ընդունել, անգլիական կառավարութիւնը նոր պահանջներ պիտի աւելցնէ Մակեդոնիոյ համար:

— Մարօք.— Սպանիական կառավարութիւնը առաջարկած է Սուլթանին որ Մարօքի համաժողովը Մատրիտի մէջ կայանայ նկատելով որ Ալժիրասի մէջ գտնուած պանդոկները անբաւական են:

— Հուրանի մէջ, Սուրիա, ապստամբած են, և արիւնալի անկարգութեան պատճառ եղած քանի մը զօրագուններ Երզ. բանակէն կը պատրաստուին երթալ և խաղաղեցնել ապստամբները:

— Սուլթանը ստորագրեց այն իրատէն որով կընդունի դեսպաններուն առաջարկները առանց ունէ փոփոխութեան: Բարձրագոյն դուռը անմիջապէս

հաղորդեց Աւստրիական դեսպանին. խնդիրը կարգադրուած ըլլալով նաւատորմիդը ալեւ թրքական ջուրերէն հտկանչուիլը մօտալուս է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Յարսքօէ գիւղին կայսերական պահակազօրաց գունդին մէջ խլրտուածներ կան:

— Պահապան սպաներուն արգիլուած է լրագիրներ կարգաւ վերոյիջեալ գունդին սպաները մերժած են ենթարկուիլ այս հրամանին: Զինուորներէն փամփուշտները հաւաքուած են:

— Բարիդի լրագիրներուն կը հաղորդեն թէ, կովկասը կրկին բուռն յեղափոխութեան մէջ է: Նախ թի ու քարիւղի նոր հաստատութիւններ հրկիզուած են:

— Պէրլին.— Այստեղի լրագիրներուն թեթեւաբարկէն կիմացնեն թէ նախարարութեան գիրքը խախտած է: Ահաբեկիչները յայտարարած են թէ՛ պիտի սպաննեն ամբողջ արքայական ընտանիքը և պիտի հաստատեն հասարակապետութիւն:

Լոնտոն.— Վարչաւձայէն «Ողանտարտ» լրագրի կիմացնեն թէ՛ Ձէմստփօնբը կառավարկեն փոխելարքայական ցեղը: Ձէմստփօնբու ընտրելին իշխան Տուկորուքին է, զոր կուզեն գահը նստեցնել իբր աւաջին սահմանադրական թագաւոր Ռուսիոյ:

— Բեթերսպուրկէն «Տէյլի Մէյլ» լրագրին կիմացնեն Լինէվիչի տուած վերջին հեռագիրը: Գիանակին մէջ օրէ օր ծաւալող յեղափոխութեան դէմ անոյժ կը գտնուիմ: Գործօն բանակին կէսէն աւելին արդէն ապստամբած է: պահակազինուորները անմիջապէս մեկնիլ կուզեն, անոնք կը մերժեն թղթադրամ առնել, իսկոյն հրահանգներ ուղարկեցէք: Թէ և այս հեռագրին պատասխանը խրկուած է: Բայց բովանդակութիւնը չգիտցուիր:

— Պօլիս 7 դեկտ.— Պաթումի թրքական հիւպատոսը՝ Բարձրան հեռագրած է թէ՛ քաղաքիս մէջ յեղափոխութիւն ծագած է: Փողոցներու մէջ պատնէշներ շինած են, և պատուհաններէն ումբեր նետած: Զինուորները և յեղափոխականները մէջ արիւնալից և յուսահատական յարձակումներ տեղի կունենան: Բազմաթիւ մեռածներու և վիրաւորներու մէջ կան նաև շատ մը Միւսիւլմաններ: Բ. Գրանը իր հպատակները փոխադրելու համար շոգեմա զրկել կը պատրաստուի: Այսպիսի յեղափոխական շարժումներ կան նաև Հարաւային Ռուսիոյ շատ մը քաղաքներուն մէջ:

— Բեթերսպուրկ 4 դեկտ.—

Զինուորական վերատեսչութիւնը ամբողջ առական կայսրութեան մէջ, պաշտօնանկ ըրած է 4400 սպաներ, որոնց մասին հաստատուած է թէ՛ յեղափոխականներուն կուսակից են:

— Մոսկուա 5 դեկտ.— Բոսգովսքի զօրագունը որ ապստամբած էր երէկ անձնտուր եղաւ:

— Բեթերսպուրկ 5 դեկտ.— Պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ՛ կառավարութիւնը, հոկտեմբեր 17ի մանիֆէստի հիմերու վրայ պատրաստելու է բարենորոգումներ, սակայն հիմակ ստիպուած է արակարգ միջոցներ ձեռք առնել յեղափոխական խլրտումները զսպելու համար:

— Պէրլին 5 դեկտ.— Այստեղնէն կը հեռագրեն թէ Բեթերսպուրկի մէջ երեք օրէ իվեր սարսափելի իրարանցում կը տիրէ, բոլոր բնակիչները քաղաքէն կը հեռանան: գործաթողները կեցուցած են փախստականներով լեցուն շոգեկառք մը: սակայն անոնք հիմակ կը փախչին շոգեմաում:

— Բեթերսպուրկ 5 դեկտ.— կառավարութիւնը 38 միլիոն ռուպլի տուած է զինուորներու գրութիւնը բարելաւելու համար: — Բարիդ 5 դեկտ.— Բիկուէն «էքօ տը Բարի» լրագրին կը հեռագրեն թէ՛ քաղաքիս շրջակաները պիտուորական շոգեկառք մը ջատխախտուած է, հարիւրաւոր մարդիկ մեռած են:

— Թիֆլիզէն զարնուած հեռագիր մը կիմացնէ թէ նորէն արիւնահեղ կռիւներ տեղի ունեցած են հայերու և թաթարներու մէջ: Կըսեն թէ ուսս իշխանութիւնները զինած են հայերը անոնք ալ միւսիւլմաններու տունները մտնելով բոյոջն ալ սպաննած են: Բեթերսպուրկի թիւք դեսպանը իր կառավարութեան հրահանգ ստացաւ այս գէպքերու մասին ուսս կառավարութեան ուշագրութիւնը հրաւիրելու:

— Նոյնպէս ծանր խռովութիւններ տեղի ունեցան Մոսքուա—Քազանի երկաթուղիի գծին վրայ:

— Վաճառաբարձ 40 վազօններ կողոպտեցին Ռոստովի շրջակաները գտնուող աւարառուները: Տէնիսօթի և Բաստուքօքի գործարանները ալ կրակի տուին:

ՐՈՒՄԱՆԻԱ

Ռոմանական կառավարութիւնը Մակեդոնիոյ մէջ գտնուող առումանացոց գիրքը հաստատ կառանի մը վրայ դնելու և ատով իր հեղինակութիւնը պահելու համար որոշած է Սալօնիկի մէջ

առումէն պանքա մը հաստատել որ Մանաստրի մէջ ալ մասնաճիւղ մը պիտի ունենայ: Ռումէն կառավարութիւնը այդ նոր հաստատուած պանքան միջոցաւ պիտի գնէ Մակեդոնիոյ ծխախոտները փոխարէն 50/0 միջնորդչէք մը վճարելով, որովհետեւ Ռումանիա մեծ քանակութեամբ թրքական ծխախոտի պէտք ունի, գրեթէ հայթայթիչները Մակեդոնացի առումէններ են որոնք ծխախոտի ընդարձակ առևտուր կընեն Մակեդոնիոյ մէջ:

ՍԵՐՊ-ՊՈՒԼԿ. ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Մի քանի օր առաջ Պուլկարիոյ իշխանին և Սերպիոյ թագաւորին մէջ տեսակցութիւն մը տեղի ունեցաւ ներկայութեամբ Սերպիոյ նախարարին, արտաքին գործոց նախարարին և Պէլկրատի պուլկար գիւնաագիտական գործակատարին:

Այս տեսակցութեան մէջ կարծիքներու փոխանակութիւններ տեղի ունեցան գլխաւորաբար Մակեդոնիոյ արգի վիճակին ներկատմամբ:

Կատարեալ համաձայնութիւն գոյացուցին իրենց մէջ պալքանեան այդ երկու տէրութիւնները Մակեդոնիոյ մէջ կատարուելիք բարենորոգումներու և ֆինանսական քօնթօրի մասին համեմատութեամբ գործելու:

Այս երկու սլաւ ազգերու համաձայնութիւնը, որոնք միեւնոյն առընչութիւններով կապուած են իրարու հետ, քաղաքական մեծ ազդեցութիւն մը առաջ պիտի բերեն գործադրել տալով Պերլինի դաշնագրութեամբ վաւերացուած շօրջ յօդուածը:

ԱՒՍՏՐԻԱ

Աւստրիական կառավարութիւնը նոյեմբեր 26ին ժողովրդական ազատ քուէի իրաւունք շնորհեց, Միջ երեսփոխանական ժողովի մէջ այդ լուրը կը յայտարարուէր, 75000 հոգի թափօր կազմած կանցնէին ժողովին շէնքին առջեւէն:

ԱՆԳՂԻԱ

Նոր նախարարութեան կազմութեան հետեւտնքով Անգլիա կարեւոր փոփոխութիւններ պիտի կատարէ արտասահմանի իր գիւնագիտական ներկայացուցիչներուն մէջ:

Թագաւորին եղբորորդոյն՝ Բօննօթի Արթըր իշխանին գըլխաւորութեամբ անգլիական պատգամաւորութիւն մը ծնրակապի պատուանշանը ձարոնի կայսեր պիտի տանի: